

# Մ Է Ե Տ Ա Բ Ե Բ




“ԹՈՂ ՏՈՒՔ ՄԱՐ ՏՂՈՅՆ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ” ԳՈՒԿ. ԺԸ. 46.

ՀԱՏՈՐ ԺԱ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՆՈՅՆԵՐԵՐ 1, 1882

ԹԻՒ 11



ԵՆԿՏՐԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

### ԵՆԿՏՐԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Ահա զարմանալի պատկեր մը : Կառք մը լի մարդկամբ կ'երթայ յառաջ աւրագ, և զայն շարժող զորութիւնը չտեսնուիր : Կառքին յառաջակողմը կեցող մարդը փոքր լծակովը զոր բռնած է կրնայ կեցունել կառքը եթէ կամի : Ոչ շոգեշարժ մեքենայ և ոչ ձի կը տեսնուի որ շարժէ կառքը : Կայ սակայն շարժիչ զորութիւն մը, թէ

պետ չտեսնուիր թէ ինչ կամ ուր է այն : Այս զորութիւնն է ելեկարակաշուժիւնը, և այս յոգուածով մենք կ'ուզենք բացատրել թէ ելեկարակաշուժիւնն ինչպէս կրնայ գործածուիլ կառք շարժելու : Մեկնենք զայս, թէպէտ դժուարին է :

Աւելի քան 30 տարի առաջ Գաղիացի փիլիսոփան, Արակոյ, գտաւ որ, եթէ պղնձէ թել մը մագնիսի մը մէկ

ծայրէն միւս ծայրը երթայ դայ, և ելեկարական հոսանք յառաջ կու գայ : Ինչպէս հասարակ ելեկարական մեքենայէ յառաջ եկած ելեկարակաշուժիւնը, նոյնպէս այս կրնայ տարուիլ այլուր :

Սիմէն անուն Գերմանացի գիտունը հնարեց մեր երկրորդ պատկերին մեքենան որ յառաջ կը բերէ այս ելեկարական զորութիւնը : Սիմէնի մեքե-


Յ. Բ. Մ.



տեն քնանալուն համար :” «Ո՛հ, այս”, ըսաւ Լինգըն, և իւր աչքը նետելով իւր առջև եղած նամակներուն վրայ, շարունակեց. «Կը յիշեմ, այն երիտաւարդին քունը մահացու քուն մ’էր : Գիտես, զաւակս, թէ մասնաւոր վըտանդի ժամ մ’էր, և հազարաւոր կեանքեր կրնային զհատիլ եղբորդ պատժագարտ անհոգութեամբը :” «Իմ հայրս ալ այնպէս ըսաւ”, պատասխանեց Պլասըմ վեհանձնութեամբ. «բայց, տէր, խեղճ բենիամին այնչափ յոգնած էր և ձէյնս այնպէս տկար, որ բենիամին երկու հոգւոյ գործ կատարեց, և կարգը ձէյմըսին էր ոչ թէ բենիամինի, բայց ձէյնս շատ տկար էր, և բենիամին երբէք չխորհեցաւ թէ ինք ալ շատ յոգնած էր :” «Ինչ կ’ըսես, ա՛ղջիկ, հոս եկու նայիմ, ես չհասկցայ”, ըսաւ նախագահը, և անոր ձեռքէն բռնեց և սկսաւ ուշադրութեամբ մտիկ ընել հասկնալու համար թէ ինչ բռնել կ’ուզէր : Պլասըմ գնաց նախագահին մօտ որ իր ձեռքը անոր ուսոյը վրայ դրաւ, և անոր տոկոյն և խռովեալ գէմքը իրեն դարձուց : Պլասըմ իւր խնդիրը պարզ և շակէ շիտակ պատմեց նախագահին, և բենիամինի նամակը Մը. Լինգընի ձեռքը տուաւ : Մը. Լինգըն զգուշութեամբ կարդաց նամակը, և աճապարանօք մէկ քանի սող զիր դրեց, և զարկաւ իր զանգակը : Ծառայն ներս եկաւ, և նախագահն ըսաւ անոր. «Այս հեռագիրն անմիջապէս գրիէ :” Մը. Լինգըն յետոյ դատնալով ըսաւ աղջկան, «Տուն դարձիր, ա՛ղջիկս, և բռն’ հօրըդ որ թէև ըսաւ օրինաց երկրին երիտասարդ բենիամին իւր կեանքով քաւելու էր իւր անհոգութեան յանցանքը, բայց Աբրահամ Լինգըն այն կեանքը այնչափ թանկազին կը սեպէ որ չկրնար հաւանիլ անոր կորսուելուն : Գնա տուն, կամ կեցիր մինչև վաղիւ առաւօտ : Բենիամին այսպէս քաջարար մահուան ճակատապէ ետքը պէտք է որ օգտախառնութիւն ընէ, ինք քու հեռոյ պիտի երթայ :” «Աստուած օրհնէ ձեզ, տէր իմ”, ըսաւ Պլասըմ : Երկու օր ետքը պատանի զինուորը նախագահին պալատն եկաւ իւր փոքրիկ քրօջը հետ : Բենիամին կանչուեցաւ նախագահին առանձին սենեակը, և նախագահը նշան մը կապեց անոր ուսին վրայ բռնելով, «Այս նշանը կը կախեմ ուսի մը վրայ որ կրնայ ստանիլ իւր հիւանդ ընկերին բեռը. երիտասարդի մը ուսին վրայ որ գիտէ մեռնիլ ապէկ գործի մը, համար այսպէս անտրտունջ :”

Յետոյ բենիամին և Պլասըմ ճամբայ ելան իրենց գիւղը երթալու : Բազմութիւն մը ժողոված էր անոնց գալուստը ողջունելու : Երկրագործ Օէնին գլուխը բազմութեան մէջ աւանդէ վեր կը բարձրանար : Գորովաւ գոթ հայրը յառաջ անցաւ, և անհուն բերկրութեամբ սեղմեց իւր որդւոյն ձեռքն, և ապա ձեռքն անոր գլխոյն վրայ դնելով գոչեց. «Արդար և ուղիղ են քու ճամբաներդ, ով թագաւոր սրբոյ :” Գնժմամբ և խրնդութեամբ ի էր ամէն սիրտ : Բարի գործի մը վախճանն և յաղթանակն ահա այսպէս փառաւոր է :

Նիկոմիդիա  
Թարգմանեց Անդրէրէնէ  
Գ. Կ. ՔԷՄԱԼԵԱՆ



ՄՐՋՆՈՅ  
ՄՐՋԻՒՆՔ

«Ով ծոյլ, միջիւնին գնա, անոր ճամբաները տես և իմաստուն եղիր” (Սուտ. 2. 6) :  
«Մըջիւնները զօրաւոր ժողովուրդ մը չեն, բայց իրենց կերակուրն ամուսնին կը պատրաստեն” (Սուտ. 1. 23) :  
Մեր ընթերցողը անշուշտ տեսած են թէ ինչպէս մըջիւնք մեծ խնամով հոգ կը տանին իրենց ձուերուն կամ իրենց ձագերուն, և ինչ փութով կը մթերեն իրենց պաշար ձուերուն համար : Այս երկրին մէջ մըջիւնք մանր են և անոնց տեսակները քիչ. բայց

ուրիշ երկիրներ կան միջնոյ շատ տեսակներ, յորոյ ոմանք նշանաւոր յատկութիւններ ունին :

Ուրիշ կոչուած միջիւնք կաւր ջրոյ հետ զանգելով կը շինեն աղիւս, և այս աղիւսներով կը կանգնեն գմբեթաձև տուներ, որ երբեմն մինչև վեց ոտք բարձր և ութ կամ տասն ոտք լայն են : Յետոյ մեծ բազմութեամբ կ’ելլեն ծառի մը վրայ, տերևներ քաղելով կը կտրեն զանոնք մաս մաս, զորս կը միտարներու պէս կը շարեն իրենց գմբեթաձև յարկին վրայ և կաւով կը փակցունեն զանոնք որպէս զի անձրև չանցնի ներս :

Ուրիշ տեսակ մը միջիւնք որ փոքր կը կոչուին, կ’ընտրեն դեռնին վրայ հարթ քար մը, և անոր տակը փորելով կը շինեն իրենց սենեակներ, այնպէս որ այն քարը կ’ըլլայ կրբե յարկ կամ ձեղուն այն սենեակներուն : Կան միջնոյ տեսակներ որոյ մէջ կը թռի թէ կայ աշխատութեան բաժանումն ինչպէս մեղուաց մէջ : Ոմանք կ’ածեն ձու և կը մնուցանեն իրենց ձագերը, այլք կը ժողվեն պաշար, կէսք ևս զինուոր են և կ’երթան ՚ի պատերազմ՝ պաշտպանել իրենց տուները թնամեաց դէմ :

Մըջնոյ կերակուր են ընդհանրապէս հաւք կամ սերմանք տնկոց, զորս ժողվելով կը մթերեն չոր աեղեր պահելու համար զանոնք փրատութենէ : Մըջնոց բոլոր տեսակները կը թռի թէ կը սիրեն անոյշ բուսներ, և այն երկիրներ ուր միջիւնք շատ են դժուարին է պահել ա-

նանցմէ չաքար, մեղր և ուրիշ քաղցրահամ նիւթեր : Կան այլևայլ տեսակ միջնաներ որոց մարմնէն կ’ելլէ անոյշ հիւթ, և միջիւնք բարեկամ են ատոնց և կը պահեն զանոնք բազմութեամբ իրենց բնակարաններուն մօտ, ինչպէս կաթնաթափառ կը պահեն կովեր անոնց կաթին համար :

Տնկոյ մը ճիւղին վրայ որ ցուցուած է մեր պատկերին մէջ՝ կայ այսպիսի միջնաներու խումբ մը որ կը կոչուին «էլ», և պատկերին խորը կայ ուրիշ ճիւղ մը որուն վրայ կը կենայ ակիս մը, և անոր քով մեծ միջիւնք մը որ կը ծծէ միջնաէն վազած անոյշ հիւթը : Մըջիւնք արդարև զարմանալի մի-

Հասններ են : Կայ տեսակ մը որ անկարող է անուցանել զինք : Այս մըր ջիւնը կը մեռնին անօթի , շաքարի և մեղրի առատութեան մէջ անգամ , եթէ չունենան ծառաներ որ անոնց կերակուր տան : Ուստի այս տեսակ մըր ջիւնը գերի կը բռնեն ուրիշ մըր ջիւներ որ այս ծառայութիւնը մատուցանեն անոնց :

Այս տեսակ մըր ջիւնը կը նմանին կարգ մը մարդոց որ անպիտան են , և իրենց պիտոյքն հողալ կու տան ուրիշներուն : Ապագային համար աշխատելու և հողալու յատկութեամբ մըր ջիւնն արդարեւ օրինակ է մեզ , և այսպիսի կը համարի զնա այս յոյուածին սկիզբը դրամած խօսքին հեղինակն ըսելով , «Ո՛վ ծոյլ , մըր ջիւնին գնա , անոր ճամբաները տես և իմաստուն եղիբ :»

համար յատկապէս շնորհակալ ըլլալու են Աստուծոյ . բայց այսպիսիք յիշելու են թէ ամէնքս պարտինք շնորհակալ ըլլալ Աստուծոյ ոչ միայն այն բաներուն համար զոր ունինք , այլ նաև շատ բաներու համար զոր չունինք : Ոմանք կրնան ըսել , «Գեղեցիկ տաներ , շատ արտեր և առատ առտելիք ունինք ,» իսկ գուց թերևս ըսէք . «Մենք այն բաները չունինք :» Այսու ամենայնիւ թերևս դուք քան զնոսա աւելի պատճառ ունիք շնորհակալ ըլլալու Աստուծոյ : Գուց ալ կրնաք ըսել . «Ոչ հիւանդութիւն ունինք և ոչ վիշտ :» Արպիտի՛ օրհնութիւն է այս : Թերևս կրնաք ըսել . «Տկար չեմ , առողջ մարմնով և կուրախ մտք կրնամ հոգայ իմ պիտոյքս , և կրնամ բարիք ընել այլոց :» Այսպիսի օրհնութիւն ձեռք բերելու

այս ծառին պտուղէն , և յաճախ կը պահեն զայն ժայռերու խառններու մէջ , ուր այն պտուղն խոնաւութեան և ջերմութեան ազդեցութեամբ կը բողբոջի և կ'ըլլայ ծառ : Ծառին ճիւղերէն կ'արձակուին մանր մանր թերթեր որ մինչև գետին իջնելով կ'ըլլան ծառին երկրորդական բուսներ : Այսպէս , եթէ պարագաները նպաստաւոր ըլլան , Պանեան ծառ մը կրնայ ծածկել ընդարձակ գետին մը , և այս ծառերէն ոմանք այնպէս խոշոր են որ անոնցմէ ամէն մէկուն հովանոյն ներքեւ մինչև 15,000 հոգի կրնան արևէ պատսպարուիլ : Այս տեսակ ծառեր կը սնկուին մեհեաններու մօտ , և հասարակաց ճամբաներու եզերքը , և քաղցր հովանի կ'ընծայեն խոնջեալ ճամբորդներու :

Ծառն ունի խոշոր և գեղեցիկ տերևներ , զորս Պարահմինք կը գործածեն իբրև պրնակ կամ ախտէ :

ՆՈՐԱՆՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Անոնք որ Հին Կտակարանը կը կարդան , գիտեն թէ խրայէլի որդիք սովորութիւն ունէին որոշեալ օրեր յատուկ շնորհակալութիւն մատուցանել Աստուծոյ անոր ողորմութեանց համար : Այս սովորութիւնը գեոկայ Քրիստոնեայ ժողովրդոց մէջ : Ամերիկայի մէջ Նոր Անգլիայի բնակիչք Ամերիկա հաստատուելէն ի վեր սովորութիւն ըրած են այնան մէջ օր մը յատուկ շնորհակալութեան օր ընել , և այն օր որդիք և թառուք սովորաբար կը խմբուին իրենց ծնողաց կամ հաւուց տաներն , և այլևայլ եկեղեցիներու մէջ կրօնական պաշտամանց ներկայ գտնուելէ ետքը , օրը կ'անցունեն միաբան ուրախութեամբ և շնորհակալութեամբ : Այս սովորութիւնը փայելուց և գեղեցիկ սովորութիւն է , և հետզհետէ ընդհանուր կ'ըլլայ բոլոր Միացեալ Նահանգաց մէջ : Մենք ամէնքս Աստուծոյ ընդունած ենք շատ պարզ կենք որոյ համար պարտինք շնորհակալ ըլլալ մեր երկնաւոր Հօր ա՛ն՛ն ա՛ն՛ն : Ոմանք որ շատ քիչ մասն ունին աշխարհային հարստութենէ և ճոխութենէ , թերևս կը կարծեն թէ քիչ բան ունին որոյ



ՊԱՆԵԱՆ ԿՈՉՈՒՄԾ ԵՄՈՐԸ

համար շատ մը սկար հարուստներ յօժարութեամբ կու ապրին իրենց բոլոր հարստութիւնը : Այսպէս կը տեսնենք թէ շատ գիւրութիւններէ զուրկ ըլլալով հանգերձ՝ կրնանք սակաւին ունենալ շատ պատճառներ շնորհակալ ըլլալու : Եթէ որ կարող է ըսել . «Առողջութիւն ունիմ , պարտք չունիմ , և առաւել քան զամենայն գոհ սիրտ ունիմ ,» այսպիսի մարդ մը պատճառ ունի ոչ որ մը փոյն այլ բուր օրէնք ընել շնորհակալութեան օրեր :

ՊԱՆԵԱՆ ԿՈՉՈՒՄԾ ԵՄՈՐԸ

Այս նշանաւոր ծառը Հնդկաստանի մէջ կը բուսնի . թղենոյ տեսակ մ'է , և կու ապ քան սլաւն ոչինչ աւելի մեծ պտուղ մը որ ունի մանր մանր սերմեր : Թուշուք շատ կ'ախորժին

իրենց բարեկամներուն և ծանօթներուն : Կը յուսանք որ այս տերթը թիւրը պիտի արուին այնպիսիներու որ գեո չեն տեսած կամ կարգացած Տղայոց Աւետարեան , և այսպէս յառաջիկայ տարի մեր բաժանորդաց թիւը կ'աւելնայ :

ԱՒԵՏԱՐԵՐՆԵՐՈՒ ԳԻՆԸ

ԱՄՄԱԿԱՆ (Հոյեբն Էրօ՛ւ , և Հոյ. Տահիբէն), փոսթայի ծախքով , տարին 6 դահեկան է :

Ամերիկայի Միտիոնարաց ընկերութեան կողմէն Խմբագիր ձ. Ք. ԿՐԻՆ Ֆիլադելֆիայ եօգուշու , Ամերիկան Խան

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ՅԱԿՈԲՈՒԹԻՒՆ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՏԱՅԱՆ